ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

11 հուլիսի 2016 թվականի **թիվ 17** քաղ. Աստանա

Արտահանման ֆինանսական օժանդակության հարցերով աշխատանքային խմբի մասին

«Արտահանման զարգացմանն ուղղված միջոցների մասին» Եվրասիական միջկառավարական խորհրդի 2015 թվականի մայիսի 29-ի թիվ 2 որոշման 1-ին կետի իրագործման նպատակով՝

1. Ստեղծել արտահանման ֆինանսական օժանդակության հարցերով աշխատանքային խումբ՝ դրա կազմում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչների ընդգրկումը նախատեսելով:

2. Խնդրանքով դիմել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարություններին՝ մինչեւ 2016 թվականի սեպտեմբերի 1-ը Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնել թեկնածություններ՝ սույն

Կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի կազմում ընդգրկելու համար։

3. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում այն ընդունելու օրվանից։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Բ. Սագինտաեւ**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**